ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 փետրվարի 2018թ N7–Ա

<<ԿՈՂԲ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ավագանին նշում է որ Կողբ խոշորացված համայնքի կոմունալ ենթակառուցվածքների սպասարկման և համայնքային ծառայությունների մատուցման համակարգի բարելավման նպատակով Կողբ համայնքի ծրագրի նախաձեռնող խմբի և Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամի միջև 15.02.2018թ կնքվել է նախնական համաձայնագիրը:
ծրագրի ընդհանուր արժեքը, ըստ նախնական փորձաքննության եզրակացության, կազմում է 179.600.000դրամ,որից համայնքի ներդրման դրամական արժեքը՝ 4.450.000 դրամ:
Համաձայնագրի շրջանակներում նախաձեռնող խումբը պարտավորվել է ապահովել 2.087.000 դրամի վճարումը ՀՏԶՀ-ի բանկային հաշվին որպես համայնքի ներդրման մաս,որից առնվազն կեսի՝1.043.000 դրամի վճարումը նախնական համաձայնագիրը ստորագրելուց հետո 30/երեսուն/ օրվա ընթացքում:
Ելնելով վերոհիշյալից և առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5/-րդ և 6/-րդ կետերի պահանջներով

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1.Թույլատրել Կողբ համայնքի ղեկավարին՝

1.2 Փոխանցումն իրականացնել համայնքի բյուջեի վարչական մասից՝ այդ նպատակով վարչական բյուջեի պահուստային մասի 4891 հոդվածից 1.043.000 դրամ տեղափոխել բյուջեի ընդհանուր բնույթի համայնքային ծախսերի 4657 հոդված /դրամաշնորհ/:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ Կողմ ---------- Դեմ ---------- Չեռնպահ ----------

ԱԲՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ Կողմ ---------- Դեմ ---------- Չեռնպահ ----------

ԱՋԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ Կողմ ---------- Դեմ ---------- Չեռնպահ ----------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ Կողմ ---------- Դեմ ---------- Չեռնպահ ----------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ Կողմ ---------- Դեմ ---------- Չեռնպահ ----------

ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ Կողմ ---------- Դեմ ---------- Չեռնպահ ----------

Կողմ -- 5

Դեմ -0

Չեռնպահ --0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ
20 փետրվարի 2018թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԿՈՂԲԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *07619249*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, գ. Կողբ
փողոց 52, թիվ1, հեռ. 0266-5-21-90, էլ.Փոստ Koghb.tavush@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 փետրվարի 2018թ N 8–Ա

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԱՅԴ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՈՒՆԵՑՈՂ 2018Թ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ 2018Թ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով որ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թ. դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերի վարչական տարածքում գտնվող մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքների համար վճարման ենթակա հողի հարկի և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույքի գույքահարկի տարեկան գումարը հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից համայնքի բյուջե է վճարվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված գումարներից:
Ելնելով վերոհիշյալից

ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել սահմանամերձ չօգտագործվող հողատարածքների հողի հարկ և այդ հողերի վրա ունեցած անշարժ գույք ունեցող գույքահարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց 2018թ ցուցակները համաձայն հավելվածի:

2.Առաջարկել Կողբ համայնքի ղեկավարին սույն որոշմամբ հաստատված ցուցակները ներկայացնել ՀՀ Տավուշի մարզպետարան:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՈՐՈՇՈՒՄԸ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ՝

ԱԲՈՎՅԱՆ ԱԼԻԿ	Կողմ ----------	Դեմ ----------	Ձեռնպահ ----------
ԱԲՈՎՅԱՆ ԱՐՄԵՆ	Կողմ ----------	Դեմ ----------	Ձեռնպահ ----------
ԱՋԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ	Կողմ ----------	Դեմ ----------	Ձեռնպահ ----------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ Կողմ ---------- Դեմ ---------- Չեռնպահ ----------

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ Կողմ ---------- Դեմ ---------- Չեռնպահ ----------

ՋԱՂԻՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ Կողմ ---------- Դեմ ---------- Չեռնպահ ----------

Կողմ -- 5

Դեմ -0

Չեռնպահ --0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ
20 փետրվարի 2018թ